Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլ ի հարցաշարերի պատասխաններ
10-րդ դասարան

1. Հայ իրականության մեջ վերածնության սաղմերը նշմարվում են դեռևս IX դարասկզբին , երբ արդեն ուրվագծում էր Հայաստանի պետականության վերականգնումը: X դարում, Բագրատունիների թագավորության հաստատումով, թափ առավ քաղաքաշինությունը (Անի, Խլաթ), ծաղկեցին արհեստները, ձևավորվեց և ավարտին հասավ հայ ժողովրդական էպոսը , Նարեկացու հանճարով փայլատակեց բանաստեղծությունը, աննախադեպ զարգացում ապրեցին մանրանկարչությունը, եկեղեցաշինությունը (Ախթամար, Տաթև), Թոնդրակյան շարժումը նախագծեց մարդու իրավունքների հաստատումը, կյանք առան մարդասիրական գաղափարներ: Նարեկացին իր հանճարեղ պոեմում շոշափել է համամարդկային գաղափարներ, ջանացել է մարդուն վերադարձնել իր ազատության, ինքնուրույն մտածելու կարողության, բնությունը ճանաչելու և նրանով ապրելու իրավունքը: Նարեկացին գրեթե երեք դարով կանխել է Արևմուտքի վերածնունդը: Նա համարձակորեն մարդուն բնակեցրել է Աստծո մեջ և Աստծուն ՝ մարդու մեջ՝ մարդուն մղելով ինքնամաքրման: Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը շաղախված է մարդասիրությամբ, կենսասիրությամբ, լույսով, զոջումով, այն համայն մարդկության հոգու և սրտի երգն է: ««Մատյանը» մեր բանաստեղծության Աղթամարա վանքն է՝ լոկ այն զանազանությամբ, որ «Մատյանն» անկործանելի է ստուգապես»: Պարույր Սևակ

Շրջասույթները՝ մեծ աղոթասած, մեծ մարդախույզ, մեծ աստվածախույզ, մեծ տառապյալ, Աստծո խոսնակ……

2. Հայրենը՝ որպես բանաստեղծական տեսակ, ձևավորվել է 10-12 դարերից սկսած՝ միաժամանակ թե որպես անհատական ստեղծագործություն, թե որպես ժողովրդական բանահյուսություն: Հայրեն օգտագործել է դեռևս Նարեկացին իր մի քանի տաղերում և «Մատյան»-ի մի գլխում: Հայրեններ գրել են Ֆրիկը, Ներսես Շնորհալին, Հովհաննես Երզնկացին և ուրիշներ: Հայրենների ծաղկման շրջանը 14-17-րդ դարերն են: «Հայրեն» եզրույթը վկայվել է«հայերեն»,«հարեն»,«հայրենի» և այլ ձևերով, որ նշանակում է, թե այդ երգերը հղացված էին հայկական ձևով և նայկական երաժշտությամբ: Հայրենը իմաստային,պատկերային, զգացմունքային մեծ խտացում ունեցող փոքրածավալ ստեղծագործություն է՝ հիմնականում չորստողանի՝15 վանկանի՝7/8 բաժանումով: Նահապետ Քուչակի (XVI դար) հայրենները ունեն խիստ անհատական դրոշմ. խոսում է իրական մարդը. տեսնում ես սիրահարին և նրա սիրած գեղեցկուհուն, նրանց թաղերն ու փողոցները, որտեղ պատահաբար հանդիպում են : Քուչակի հայրենները, եթե անգամ եկել են բանահյուսությունից, կրում են խիստ անհատական բնույթ՝ սիրային, պանդխտության և խոհական բնույթի: Ներկայացված տաղում սիրահարը խոսում է իր անունից, այս դեպքում՝ կնոջ

անունից։ Սերը կյանքի հիմքն է, օրհներգը, առանց սիրո կյանքն անկարելի է դառնում, աղջիկը այդ սերը օղակ է դարձնում ու հագցնում սրտի ականջին, Սերդ ոսկի արիր, այսինքն՝ կրակ ու բոց, որ կնոջ սրտի քուրայում է հալեցնում։ Անծանոթ տեղից եկած տղամարդու սերը կրակի նման լցվում է կնոջ ծոցիկը, սրտի ականջում հնչում է անընդհատ։ Եվ չի դժգոհում «սիրո տեր» եղած աղջիկը, այլ ապրում է այդ կրակի ջերմությամբ։
Առաջին հայրենում խոսում է տղամարդը՝ հպարտ, անընկճելի, բարձր թռչող հավք է, որ ներքև չի նայում, բայց սիրո առաջ անզոր են բոլորը, և գետնից կուտ չուտող ու երկնքում ճախրող թռչունի նման՝սիրո ծովի մեջ լարված ակնատ- թակարդն է ընկնում ոչ միայն «երկու ոտքով», այլ «թևն էլ ավելի»։ Ուրեմն՝ անկարելի է փակել սրտի դուռը, և ուրեմն՝ օրհնյալ են սերն ու սիրահարները, ովքեր նորոգում են կյանքը իրենց մաքուր, անշահախնդիր սիրով։
Սա է մեծ սիրերգակի հավատամքն ու պատգամը։

3. Սայաթ- Նովան միջնադարի վերջին հանճարն է, վերջին առեղծվածային երևույթը, որ այսօր էլ մնում է առեղծված՝ իր կենսագրությամբ, իր ստեղծագործությամբ, իր վախճանով։ Տարիներ շարունակ վիճելի է եղել նրա ծննդյան տարեթիվը. տարբեր հետազոտողներ, ելնելով տարբեր կռվաններից ՝ իր իսկ «Դավթար»-ում եղած խաղերից, այդ թիվը համար են 1711, 1712,1717 և այլն։ Երկար տարիներ հավաստի է համարվել մեծ երախտավոր, առաջին սայաթնովայագետ Գևորգ Ախվերդյանի հայտնած տարեթիվը՝ 1712, այնուհետև գրականագետ Մորուս Հասրաթյանը այն համարել է1717-ը, և միայն 1966-ին Պարույր Սևակը իր «Սայաթ-Նովա» աշխատությամբ, ելնելով Սայաթ- Նովայի խաղերից, հիմնավորապես ճշտեց մեծ հանճարի ծննդյան թվականը՝1722, որն էլ ընդունվեց անվերապահորեն։ Սայաթ- Նովայի ծագման և կարգավիճակի մասին մեզ տեղեկություն է տալիս հենց ինքը.

Սայաթ- Նովու վաթանիցն հարց կու տան,
Մեկը կոսե Հինդն է, մեկը՝ Համադան…
Վաթանըս Թիփլիսն է, կողմը՝ Վրաստան
Մերըս Հավլաբարցի, հերըս Հալաբլու։

Այստեղից պարզ է դառնում, որ բանաստեղծի հայրը մահտեսի Կարապետն է՝ ծնված Ադանայում, որ հետո հաստատվել է Հայեպում, այնուհետև Թիֆլիսում՝ ամուսնանալով սանահինցի Սառայի հետ։ 1750-ին գրած խաղում Սայաթ- Նովան ներկայացնում է իր կենսագրությունը՝ 9 տարեկանից մինչև 20 տարեկանը, որից տեղեկանում ենք, որ եղել է ջուլհակի աշակերտ, հետո դարձել է «գիր- ղալամին ընկեր», հետո՝«Տասնըինը տարեկանում ման եկա Հաբաշ-Հինդուստան,
Քըսան տարուց, էշխի ընկած, լալ կը ծախեմ սովդաքարին» ։
Այստեղից ակնհայտ է դառնում, որ Սայաթ-Նովան վրաց զորագնդի կազմում մասնակցել է Նադիր շահի հնդկական արշավանքներին «ման եկա Հաբաշ-Հինդուստան», նա արժանացել է Հերակլի համակրանքին և նրա իսկ հովանավորությամբ դարձել պալատական երգիչ, ուր և հանդիպել է իր ճակատագրական սիրուն՝ արքայադուստր և արքայաքույր Աննա Բատոնաշվիլուն,

ում էլ նվիրված է նրա ողջ սիրերգությունը։Նա հրաշալի գիտակցու,մ է, որ անհույս է իր սերը .«Գիդիմ վուր, յար, դուն ինձ լայիղ չիս անի

Դուն մի թագավուր իս, յիս՝ մե խեղճ դավրիշ.....

Ով ես , Սոայաթ- Նովա մի չարքաշ ես դուն»։

Բայց Սայաթ- Նովան արքա էր ավելի, քան այն արքաները, որոնց նա պիտի ծառայեր։ Նա իր սիրած յարին «թարիփ է» անում աննկարագրելի մակդիրներով, համեմատություններով, փոխաբերություններով : «Թամամ աշխար պտուտ եկա» երգը գեղեցկուհու ամբողջական ու հմայիչ պատկեր է. բանաստեղծը շրջել է աշխարհը, անգամ Եթովպիա է հասել, բայց այդպիսի գեղեցկություն չի տեսել. իր յարի պատկերը անկրկնելի է՝ «Դուն դիփուեն բաշ, նազանի», նրա հագած անգամ հասարակ հագուստը դառնում է մետաքս՝ «Թե խամ հաքնիս, թե խաս հաքնիս կու շինիս ղումաշ, նազանի»։ Բազմաթիվ գովեստներով չի բավարարվում անբուժելի սիրահարը, քանի որ՝«Դո՛ւն կըրակ, հա՛քածըտ կըրակ, վո՞ւր մե կըրակին դիմանամ»։ Բայց չդիմանալով դիմանում է, քանի որ «Աշխարումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջան ես ինձ ամա. Անմահական ջրրով լիքըն օսկե փընջան իս ինձ ամա», նա «զարբար վըրան» է, «սուլթան ու խան» է,որի «Լիզուն շաքար, պըռոշը ղանդ է, ակռեքը մարքրիտ, ալմաս է»(«Աշխարումըս ախ չիմ քաշի»), «Ձենըտ քաղցր ունիս» երգում աշուղ – բանաստեղծը իր Աննային չի կարող համեմատել երկրային որևէ առարկայի հետ, որովհետև ամեն ինչ անցողիկ է՝ «Ղումա՛շ ասիմ՝ շուրեղեն է, կու մաշվի,

Սա՛լբի ասիմ՝ ախըր մին օր կու տաշվի

Ջե՛յրան՝ ասիմ շատ մարթ քիղիդ կու յաշվի,

Բաս վո՞ւնց թարիփ անիմ՝մար՛ա իս, զո՛զալ»։

Համեմատելով«մանիշակի, ջավահիրի, լուսնի, արեգակի» հետ՝ ի վերջո գտնում է մի համեմատություն, որ միայն իրենն է՝**«ծովեմեն դուս էկած զարա իս, զոզալ»**. մարան անգին քար է՝ առասպելական վիշապօձի գլխին, իսկ զարան ծովային ծաղիկ է։ Սայաթ- Նովայի սիրո ողբերգության հիմքը սոցիալական անհավասարությունն է, և բանաստեղծը ծառանում է դրանից բխող հասարակական չարիքների դեմ։ Այդ դասային անհավասարության պատճառով Հերակլ 2-րդը նրան ոչ միայն վտարում է պալատից, այլև վանականի սև սքեմ է հագցնում՝Հաղպատի վանքո ւմ կարգելով լուսարար։ Անհուն ցավով կարդում ենք երգիչ- բանաստեղծի մորմոքը՝

Հաղպատու լուսարար Սայաթ- Նովեն իմ

Մե կանթեղիս վառելու ձեթ չունիմ։

Այն իրականության մեջ, ուր իշխում են չաչն ու չարիքը ոտնահարվում են մարդկային բարոյականության բոլոր չափանիշները, և բանաստեղծը ծառանում է աշխարհի դեմ՝ Մարթուս էհթիբար չըմընաց, դարի ձեռնեմեն դադ կոնիմ,

Դիփ խառնակիչ ու ավիրող չարի ձեռնեմեն դադ կոնիմ։

Նա անհուն կսկիծով ու դառնությամբ իր հովանավոր արքային հիշեցնում է՝

Դուն է՛ն գրխեն իմաստուն իս,խիլքտ հիմարին բաբ մի անի,

.....

Թեվուր գիդիմ բեզարիլ իս, ուրիշին սաբաբ մի՛ անի…

Եվ ինքնաճանաչման ու ինքնագնահատման հպարտ անպարտելիությամբ հաստատում է՝ Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրի՛շ ջըրեն է,
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրի՛շ գըրեն է։
Եվ այնուհետև պահանջում է՝Արթա՛ր դատե, չէ՞ վուր թաքավուր իս դուն
Վրաստանում տեր ու զորավուր իս դուն։
Սա 1752- ին էր. Հերակլ 2-րդը կրկին նրան բերում է պալատ, բայց «խալխի նոքարը» չէր կարող լռել , նա տեսնում էր խեղճ գլեխիների կյանքը, տեսնում էր անօրեն հարստահարիչների ամբարտավան արհամարհանքը, և մեծ Բեզարածը բազում ձևերով արտահայտում է իր դժգոհություն- ողբը՝ Աշխարըս մե փանջարա է- թաղերումեն բեզարիլ իմ,Մըտիկ տըվողըն կու խոցվի- դաղերումեն բեզարիլ իմ։ 1759- ին է գրված «Աշխարըս մե փանջարա է» գլուխգործոցը։ Խոցված բանաստեղծը գիտի որ« ղուրթը էնդուր ճամփա չէ գընում՝ շատացիլ է խալխի սուտըն»։ Նա հոգնել ու վիրավորել է ամենքից ու ամեն ինչից և միայն «խալխին» է ծառայում՝ իրեն անվանելով «խալխի նոքար»՝ Արի համով ղուլուղ արա, խալխի նոքար, Սայաթ- Նովա։
Սայաթ- Նովան իր 300- ամյա հեռվից իսկ մեզ պատգամում է՝ Գիր սիրե, ղալամ սիրե, դավթար սիրե, որպեսզի միշտ մեզ հետ լինի Խալխի նոքարը, մեծ Ըղձավորն ու մեծ Բեզարածը, որ՝ Խաղով եկավ, ախով գնաց, Երգով եկավ, վերքով գնաց, սիրով եկավ, սրով գնաց, Սիրով մնաց , ու այդ աստվածային սերը մինչ այսօր էլ մեզ զգուշացնում է. Հե՛ստի էշխի կըրակ ունիմ՝ ինձ մոդենալ չեն կանա
Ա՛ստծու սիրուն, չմոդենա՛ք՝, կու վա՛ռե , նար է բիռըս…
Իսկ մենք թչ միայն համարձակորեն մոտենում ենք, այլև ստանում ենք հանճարի օրհնանքը՝ Ով քիզի լիոի պարքիվե, դու տու շաքար….

4. Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ դեմոկրատ, լուսավորիչ, մանկավարժ Խաչ ատուր Աբովյանը հայ ժողովրդի լուսավոր հանճարներից է, ով իր անձը և գործը ի սպաս դրեց հայրենյաց փրկության՝ հաստատելով իր խորին համոզմունքը՝«Չիք իմ այլ նպատակ առաջի, եթե ի հայրենիս մեռանիլ, վասն հայրենյաց մեռանիլ»։Աբովյանի ողջ ստեղծագործությունը հայոց լեզվին ու Հայաստանին ձոնված երգ է՝ գրված կրակված սրտով, անսահման սիրով, ցավով ու նվիրումով։ Նա առաջինն էր , որ Արարատի գագաթից տեսավ իր «դրախտավայր հայրենիքի» անհուն ցավը, իր ժողովրդի վերքը՝ օտարի լծի տակ լինելը։ Այդ օտարը, ոչ այլ ոք էր, քան խավարամիտ խանական Պարսկաստանը, որի լուծը այլևս անտանելի էր հինավուրց ու հերոսական ժողովրդի համար։ Հայ նոր գրականության հիմնաքարը հանդիսացող իր «Վերքը» նա գրել է 1827-28 թվականների ռուս- պարսկական պատերազմից 15 տարի հետո ։ Նա ականատեսն է եղել պատերազմական իրադարձությունների, անձամբ ճանաչել է իր վեպի հերոսին, տեսել է հայժողովրդի անկեղծ նվիրումը և անխորտակ հավատը իրեն փրկություն խոստացող ուժերին։ Եվրոպական կրթություն ստացած ու լուսավորության դարաշրջանի պտուղները ճաշակած գրողը, օրհնում էր «Էն սըհաթը, որ ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարքը մտավ ուղղլբաշի չար շունը մեր երկրիցը հալածեց»։ Աբովյանու օրհնում էր ռուսին, որ փրկեց հայ ժողովրդին ընդամենը

ֆիզիկական բնաջնջումից։ Հայ ժողովրդի զավակը չուներ այն միամտությունը, թե Հայաստանը փրկվել է, նա քաջ գիտակցում էր, ցարական Ռուսաստանը իր շահերն ունի, որ նա ամրացնում է իր տիրապետությունը, բայց խավարից դեպի լույս տանող մի միջոց էր այդ պատմական իրադարձությունը, իսկ հայ ժողովրդի զարթոնքը նա կապում էր կրթության, գիտության ու լույսի հետ, նա պատգամում էր«լեզուն ու հավատը խայիմ պահել», որպեսզի մյուս ազգերի նման չանհետանանք պատմության թատերաբեմից։ Իր վեպի համար նա ենթավերնագիր է ընտրել«Ողբ հայրենասիրի»։ Իսկ ինչու ողբ, որովհետև միլծից ազատագրվելով մեր երկիրը ընկավ մի այլ լծի տակ այն տարբերությամբ, որ փրկվեց ֆիզիկական բնաջնջումից։ Իսկ այսօրվա մասին պետք է գրի աշակերտը։

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլ ի հարցաշարերի գնահատման չափանիշներ
10-րդ դասարան

1-ին հարցի ենթահարցեր՝ 1 - 1 մ., 2-2 մ., 3 -1 մ.,4 - 0,5, 5 - 0,5
2-րդ հարցի ենթահարցեր՝ 1 - 1մ., 2 – 4 մ.
3-րդ հարց՝ 5 մ.
4-րդ հարցի ենթահարցեր՝ 1 – 1 մ., 2 -3 մ., 3 - 1 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան